

**Կարտոֆիլների առնչությամբ բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի ժամկետների երկարաձգում նախատեսող՝ Խորհրդի 1996 դեկտեմբերի 17-ի թիվ 2470/96 (ԵՀ) կանոնակարգ**

*Պաշտոնական տեղեկագիր L 335 , 24.12.1996 թ., էջ 0010 – 0010*

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքների վերաբերյալ Խորհրդի՝ 1994 հուլիսի 27-ի թիվ 2100/94 (ԵՀ) կանոնակարգը<sup>1</sup> եւ, մասնավորապես, դրա 19-րդ հոդվածի 2-րդ մասը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

քանի որ հայտնի է, որ կարտոֆիլի աճեցման տեխնիկական դժվարությունները մյուս բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի զգալի մեծամասնության համեմատ պահանջում են երկարատեւ հետետողական գործողությունների ծախս. քանի որ, բացի դրանից, շուկայի փորձը ցույց է տվել, որ այն գյուղատնտեսական տեսակների համեմատ, որոնք նույնպես պահանջում են երկարաժամկետ հետետողական գործողություններ, նոր կարտոֆիլի սորտն իր առետրային արժեքը բացահայտում է միայն երկարատեւ ժամկետով. քանի որ այս պատճառներով հետետողական գործողությունների արդարացի փոխհատուցումը հնարավոր է միայն այլ գյուղատնտեսական մշակաբույսերի համեմատ պաշտպանության միանգամայն ուշ փուլում,

քանի որ, որպեսզի այդպիսի արդարացի փոխհատուցմանն հասնելուն նպաստող իրավական միջավայր հաստատվի, բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի սկզբնական ժամկետի երկարաձգումը կարտոֆիլների պարագայում եւս 5 տարով ամենահարմար միջոցն է,

---

<sup>1</sup> ՊՏ թիվ L 227, 01. 09. 1994 թ., էջ 1: Կանոնակարգ՝ փոփոխված թիվ 2506/95 (ՊՏ L 258, 28. 10. 1995թ., էջ 3) կանոնակարգով (ԵՀ):

քանի որ այդպիսի երկարաձգումը պետք է կիրառվի բույսի սորտի նկատմամբ Համայնքի բոլոր վավեր իրավունքների դեպքում, որոնք շնորհվել են՝ նախքան սույն Կանոնակարգն ուժի մեջ մտնելը կամ որոնք կշնորհվեն հետագայում, եթե իրավատերն այդպիսի իրավունքից պատշաճորեն չհրաժարվի կամ բույսի սորտերի նկատմամբ իրավունքների առումով Համայնքի գրասենյակի որոշմամբ այդպիսի իրավունքը չդադարի,

քանի որ երկարաձգման ժամկետը պետք է կրճատվի, եթե անդամ պետությունում միեւնույն սորտի մասով եղել է կամ եղել են գործող՝ սեփականության ազգային իրավունք կամ իրավունքներ՝ նախքան բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքը շնորհելը, որոնք համապատասխանաբար, թույլ կտային բուսաբուծությամբ զբաղվող ֆիզիկական կամ իրավաբանական անձին արդեն իսկ օգուտ ունենալ իր ստացած սորտից. եւ քանի որ համարժեք սկզբունքն արդեն սահմանվել էր թիվ 2100/94 կանոնակարգի 116-րդ հոդվածի անցումային դրույթներով,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

### **Հոդված 1**

1. Բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի ժամկետը, ինչպես նախատեսված է թիվ 2100/94 կանոնակարգի 19-րդ հոդվածով, կարտոֆիլի տեսակների առնչությամբ երկարաձգվում է եւս 5 տարով՝ չհակասելով սույն Կանոնակարգի 116-րդ հոդվածի 4-րդ կետի պարբերույթի դրույթներին:
2. Այն սորտերի դեպքում, որոնց համար բույսի սորտի նկատմամբ ազգային իրավունքը շնորհվել է՝ նախքան բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհումը, սակայն որի պարագայում նշված կանոնակարգի 116-րդ հոդվածի 4-րդ կետի 4-րդ պարբերույթը չի կիրառվում, 1-ին պարբերության մեջ նշված երկարաձգումը կրճատվում է առավելագույնը ամբողջական տարով, որի ընթացքում միեւնույն սորտի մասով շնորհած սեփականության ազգային ցանկացած իրավունք կամ իրավունքներ գործել են անդամ երկրում՝ նախքան բույսի սորտի նկատմամբ Համայնքային իրավունքի շնորհումը:

## Հոդված 2

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական Համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակման հաջորդ օրվանից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում, 1996 թվականի դեկտեմբերի 17-ին:

Խորհրդի կողմից

Նախագահ՝

Ի. Յատես